

**Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ.**  
**«ՀԱՅՈՑ ԵՐԳՔ ՌԱՄԿԱԿԱՆՔ»Ի ԱՆԳԼԵՐԵՆ**  
**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ**

Վիթխարի է Հ. Ղեւոնդ Ալիշանի աւանդը հայ մշակութային կեանքի տարբեր ասպարհներում, այդ թւում նաեւ թարգմանչական արուեստի զարգացման գործում: Ալիշանի՝ Պայրոնից, Շիլերից, Լամարթինից եւ այլ մեծանուն հեղինակներից կատարած չափածոյ եւ արձակ թարգմանութիւնները օրդանապէս ներմուծուել են գրականութեան ոլորտ որպէս ինքնատիպ նմոյշներ, որոնք առ այսօր էլ արդիական են եւ ունեն համակողմանի քննութեան անհրաժեշտութիւն: Այս առումով, անքննելի են Յովհ. Թումանեանի հետեւեալ խօսքերը. Լաւ թարգմանութիւնը համարժէք է ինքնուրոյն ստեղծագործութեան: Յիրաւի, յանոն հայ ազգային ինքնութեան զարթօնքի Ալիշանը շօշափում էր ազգային-հայրենասիրական թեմաներ եւ լինելով օտար լեզուների, մասնաւրապէս անգլերէնի քաջ գիտակ՝ նա զուգահեռաբար կատարում էր թարգմանութիւններ՝ աշխարհին լուսաբանելու հայ ժողովրդի մշակութային արժէքները: Հայ ազգային գանձարանների նկատմամբ ալիշանեան հետաքրքրութիւնը նոր հայրենասիրական լիցքեր հաղորդելու միտում ունէր ոչ միայն պատմական Հայաստանի տարածաշրջանի ժողովրդի համար, այլեւ ամբողջ աշխարհում սփոռուած հայկական գաղթօջախներում: Եւ, անշուշտ, թարգմանութեան գործընթացը մարմնաւորել է գիտութեան եւ քաղաքակրթութեան զարգացումը՝ իր անգնահատելի գերակատարութիւնը ունենալով ազգային մշակոյթի եւ գրականութեան ստեղծման եւ հարստացման գործում: Բացի այդ թարգմանական գործունէութիւնը ունի համազգային կարեւոր նշանակութիւն, քանի որ որեւէ ժամանակահատուածում գրական ասպարէզում կատարուող իրողութիւնները եւ դրանց արտացոլումը թարգմանութեան միջոցով արձագանքում են մարդկութեանը յուզող հարցադրումներին, այսպիսով

կատարելով միջմշակութային հաղորդակցութեան դերը։ Անդրադարձը նման ազգային-ժողովրդական ստեղծագործութիւններին ունէր իր գրդապատճառները, որոնք արտացոլուել են «Բազմավկեպ»ում, եւ պայմանաւորուած էր համաեւրոպական գրական շարժմամբ, այնուևէտեւ ազգային ինքնութեան զարթօնքի միտմամբ, ինչպէս նաեւ ժողովրդական ստեղծագործութիւնների հայրենասիրական, բարոյադաստիարակչական դրական երանգաւորմամբ։ Այսպէս, 1848ի Ապրիլից «Բազմավկեպ»ի էջերում Ալիշանը ձեռնարկում է տպագրել «Քնար Հայկականք» խորագիրը կրող շարքը, որը դրական արձագանք ստացաւ եւ գոտեպնդեց գործչի նախաձեռնութիւնը ի սպաս հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային բարօրութեան։ Ալիշանը ազգային ինքնութեան արտացոլման եւ վերելքի հենքերից էր համարում ազգային երգերի, ժողովրդական աւանդութիւնների հաւաքագրումը, դասդասումը եւ ուսումնասիրութիւնը, եւ հէնց այստեղ էլ անգնահատելի է «Հայոց Երգք Ռամկականք» աշխատութիւնը, որ լոյս տեսաւ 1852ին անգլերէն գուգահեռ թարգմանութեամբ, որ փայլուն փոխակերպուել է Ալիշանի կողմից եւ ստացել «Popular Armenian Songs» խորագիրը։ Նմանատիպ զուգադիր հրատարակութիւնները, որոնց ջատագովն ու հիմնադիրն էր Միհիթար Սեբաստացին, լայն տարածում ունէին Միհիթարեան միաբանութիւններում եւ առ այսօր էլ զարմացնում են նրբանաշակ հրատարակչական ոճով եւ գիտական մօտեցմամբ։ Փաստօրէն, Ալիշանը շարունակեց զուգադիր՝ տուեալ դէպքում հայերէն-անգլերէն թարգմանութեան աւանդոյթը, որ միտուած էր նաեւ ծանօթացնել անգլեալեզու ընթերցողին հայ այբուբենի գոհարները, իսկ հայ ժողովրդին՝ անգլերէն լեզուի իւրայատկութիւնները։ Ալիշանը ծանօթագրութեան մէջ անգլերէնով հակիրճ ներկայացնում է «Հայոց Երգք Ռամկականք» շարքի դարաշրջանները, որոնք հիմնականում ԺԴ. կամ նոյնիսկ ԺԹ. դարերից են մինչեւ իր ապրած օրերը, աւելին՝ նա ընդգրծում է, որ գրեթէ աղբիւրների մեծ մասը վերցրել է Սբ. Ղազարի գրադարանի հայկական ձեռագրերից։ «Հայոց Երգք Ռամկականք» շարքը հայ աշուղական եւ գուսանա-ժողովրդական երգերի ինքնատիպ ամբողջութիւն է, եւ Ալիշանը յստակ գիտակցում էր գրայութեալուութիւնը, քանի որ այդ շարքին կից նա գրում է մի նամակ-առաջաբան՝ հասցէագրուած Լոնդոնի «Բարձրագոյն դռան ընդհանուր խորհրդականին» եւ դիւանագէտ կերպարդ Ջոհանապին, որ եղել է Լոնդոնում Օսմանեան կայսրութեան գլխաւոր դեսպանը 1838-1841։ Այդ նամակում ընդգծում է.

Ներկայացնելով բրիտանական հասարակութեանը հայկական ժողովրդական երգերի հաւաքածուի սոյն հատորը, մենք կարծում ենք, որ չէինք կարող այն նույիրել մի այլ անձնանշուրութեան, որը Զեզնից աւելի արժանաւոր լիներ. Զեզ, որ մեր ազգի ամենանշանաւոր ներկայացուցիչն է Մեծքրիտանիայի մայրաքաղաքում: Մէկը՝ որն իր դիւանագիտական բազում հոգսերի եւ դժուարութիւնների ընթացքում հանգիստ է գտնում մշակոյթով զրադուելով: Այն խոնարի ակնածանքը, որը Դուք վայելում էք մեր միաբանութեան անդամների կողմից, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում են Մեծքրիտանիա, մեզ հնարաւորութիւն ընձեռնեց հրապարակաւ ազդարարելու այդ բարեկամութիւնը, որը գոյութիւն ունի մեր միջեւ՝ այն ուժեղագոյն զգացումը, որը կապում է նոյն ազգի անդամներին օտար երկրում: Ցիշեալ բարեկամութիւնն ու ակնածանքը, որը գոյութիւն ունի Զեր նկատմամբ, անկասկած բաժանում են նաև անգլիացի մտաւորականները, որոնք ուշադրութեամբ եւ սիրով ընդունում են մեր այս փոքրիկ աշխատութիւնը:

Լոնդոն, 22 օգոստոսի, 1852 թ.  
Հ[այր] Ղեւննի Ալիշան:

**Ալիշանը** «Հայոց Երգի Ռամկականի»ի միջոցով անդրադարձ կատարեց համահայկական եւ ինչու ոչ համամարդկային միշտաք խնդիրներին, վշտերին եւ փափազներին՝ չօշափելով այնպիսի նուրբ հոգեբանական թեմաներ, ինչպիսիքն են եպիսկոպոսի կեանքի ու մահուան պայքարը, որդու կորստից մօր վշտի չափը, Աստծոյ պարզեւած կեանքը գնահատելու ունակութիւնը եւ, ի հարկէ, հայրենասիրութեան արժանիքները: Եւ այս ամէնն արւում էր աշխարհիկ բառապաշտով, «ռամկական» քաղցրիկ բառապաշտի հմուտութ գործածութեամբ: **Ալիշանը** հիացմունքով է խօսում այսպիսի երգերի մասին: «Այսպիսի երգերը շատ անգամ աւելի լաւ կ'իմացնեն ազգին հանճարը, քան թէ ծանր գրուածքներ, եւ կգտնուին անոնց մէջ անանկ սխանչելի զուրցուածք, որ միայն իրենց ուամկական անունին համար հասարակ քան կը կարծուին, բայց նշմարիտը՝ գերազոյն գրուածոց կարգը անցնելու են»: **Աւելին** գործիչն առանցքային էր համարում այլազգի ընթերցողին ներկայացնելու նմանօրինակ երգերը, այսպէս: «Փափամելի քան է, որ մեր ազգայինք ալ ուրիշ բարեկիրդ ազգաց պէս վառուէին ազգային աւանդութեանց սիրովը, ու ձեռքներնեն նեկածին չափ շանային հաւաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմութիւններ ու առակներ, ետք ուրիշներուն ալ հաղորդէին՝ կամ առանձին տպագրութեամբ եւ կամ ազգային օրագիրներն մէկուն խրկելով» (*Շտիկեան, 1981*):

**Անշուշտ,** «Հայոց Երգք Ռամկականք» աշխատութիւնը նոյն-քան անգնահատելի նշանակութիւն ունեցաւ նաեւ հայ գրակա-նութեան համար, քանի որ բազմաթիւ եւ բազմապիսի ժողովրդական կոթողներ վերածնդի հնարաւորութիւն ստացան եւ ներշնչեցին հայ մեծանուն հեղինակներին, որոնք են Մ. Պէջկիթաշ-լեանը, Յովհ. Թումանեանը եւ ուրիշներ:

**Հ. Դ. Ալիշան** խորաթափանց գեղարուեստագէտ էր եւ, ա-ներկբայօրէն, նա հիանում էր «աստուածապարգել» գրաքարի բա-ցառիկութեամբ, բայց մերթ ընդ մերթ մեծն հեղինակը իր ստեղծագործութիւններն ու աշխատութիւնները ներկայացնում էր, ինչպէս Հր. Աճառեանը կասէր՝ «ալիշանեան աշխարհաբարով»՝ ել-նելով դարաշրջանի լեզուաքաղաքական դրդապատճառներից: Հմտօրէն թարգմանելով «Հայոց Երգք Ռամկականք»ը՝ Ալիշանը բացառապէս միտուած է եղել պահպանել ազգամշակութային եւ ո-ճալեզուական նրբերանգները՝ ընդգծելով հայ ժողովրդի ոգու ամրութիւնն ու հայրենիքի նկատմամբ անհուն սէրը, նուրիրումը եւ վեհ զգացմունքները:

Մեծանուն գործիչն «Հայոց Երգք Ռամկականք»ը սկսում է հակիրճ, բայց ազգեցիկ՝ «To the British Public» (*Բրիտանիայի հա-սարակութեանը*) առաջաբանով, որտեղ հեղինակը ներկայացնում է «Armenian Popular Songs»ը՝ որպէս համեստ շարք (humble collection), մի գողտրիկ հայկական գրական անկիւն՝ ի համեմատ յղկուած եւ բարգաւած հայկական աւանդական գրականութեան (cultivated and flourishing literature), այնուհետեւ Ալիշանը արտայայտում է հետեւեալ մոռքերը «...but considering the frequent revolutions of that unhappy nation, and the incursions of so many barbarous tribes, which, during the oppressive slavery to which they reduced its inhabitants, not only destroyed its arts and literature, but even extinguished the last gleam of the poetic fire of the Sons of Ararat»: Այսպէս, Ալիշան նրբօրէն ներկայացնում է անգլեախօս հասարակութեանը հայ ժողովրդի աշխարհաքաղաքական իրավիճակը՝ նշելով, որ շատ բարբարոս ցեղեր, ոչ միայն փորձել են աւերել եւ ոչնչացնել արուեստի եւ գրականութեան կոթողներ, այլեւ մարել են Արարատի Որդիների (the Sons of Ararat) ստեղծագործելու եւ արարելու կրակը:

«Հայոց Երգք Ռամկականք»ը թեմատիկ եւ ժանրային առու-մով բաւականին ընդգրկուն է եւ համակողմանի: Աշխատութեան հէնց սկզբում գետեղուած են հայրենիքին եւ հայրենի հողին նուրիրուած երգերը, որոնց անգլերէն թարգմանութիւնը կատա-րուած է մեծ վարպետութեամբ, ինչպէս նաեւ ազգամշակութա-

յին բաղադրիչների համահունչ եւ բնական փոխակերպութեամբ։ Բնագրի պատկերաւոր տարրերի հարազատ թարգմանութիւնը նորովի է արտացոլում յուզական-արտայայտչական-գնահատողական երանգները ու ոճական առանձնայատկութիւնները։ Օրինակ, հայրենիքին նուիրուած մի շարք երգերում գեղարուեստական կերպարը կամ կերպարները միշտ տանում են յաղթանակ՝ լինի դա բարոյահոգեբանական կամ ֆիզիկական։ Ի լեռն որդի Հեթմոյ հատուածում լեռնն գերի է ընկնում Տաճկաց մօտ եւ վերջիններս ստիպում են նրան կրօնափոխ լինել, բայց անյողղողդ է լեռնի հաւատքը, որը փրկում է նրան իր հօր գալստեամբ եւ ազատագրումով։ Բնագիր եւ թարգմանութեան զուգադրական քննութեամբ բացայացուում է, որ վերոյիշեալ երգի գրեթէ իւրաքանչիւր քառեակների վերջին երկու տողերը լեռնի ազօթքի կրկնութիւններն են, որոնք էլ աւելի են ընդգծում, զօրացնում եւ ամրացնում հայ ժողովրդի հաւատքը։ Բերենք հայերէն եւ անդլերէն միեւնոյն հատուածի օրինակ, այսպէս։

Աւաղ ըզլէնն ասեմ  
Որ Տանկաց դուռն ընկել գերի։  
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ Կոյս։  
Սուրբ Խաչն օգնական Լէնին ու ամենու։

I say alas! For Leo, who has fallen  
Into slavery the power of Moslems.  
My light, my light, and holy Virgin!  
The holy Cross aid Leo and all!

Սոյն հատուածը եւ առհասարակ «Հայոց Երգք Ռամկականիք»ն ամբողջութեամբ պարզ ու շիտակ, բայց միեւնոյն ժամանակ բարձր արժանքիներով յագեցած չափածոյ է՝ լեզուի բիւրեղային յղկուածութեամբ, նրբօրէն մտածուած եւ մեկնաբանուած համարժէք թարգմանութեամբ։ Ոչ մի բնագրային տարր ու բառ չեն վրիպել Ալիշան-թարգմանչի աչքից, եւ, աներկբայօրէն, անդ-լերէն հատուածը բնագրի հայելային պատկերն է եւ համահունչ անդլերէն լեզուի իմաստաբովանդակային եւ լեզուառնական առանձնայատկութիւններին։ Այս առումով, հարկ է նշել Նիւմարկի այն տեսակէտը, որ համարժէք եւ անհամարժէք թարգմանութեան յստակ սահմանազատում գոյութիւն չունի, քանի որ թարգմանի-չը, ձգտելով բարելաւել թարգմանութեան որակը, անդադար լուծումներ գտնելու որոնումների եւ փնտրութեամբ մէջ է։ Տեսաբանը գտնում է, որ «բացարձակ» կամ «կատարեալ բարգմանու-

թիւն» հասկացութիւնը ուտոպիա է եւ ընդգծում է, որ տեղ-տեղ թարգմանիչը պէտք է գործի դնի իր «վեցերորդ զգայարանը», պարզաբանելով, թէ սկզբնաղբիւր տեքստի որ մասն է պէտք թարգմանել բառացիօրէն, իսկ որը՝ իրաղրային մօտեցմամբ (Newmark, 1988). Հաստուածը, անշուշտ համաքրիստոնէական եւ համամարդկային խնդրի երանգաւորում ունի, այնուամենայնիւ այն արտացոլում է հայ ժողովրդի տառապանքների պրիզմայի ներքոյ ու ստանում է ազգային եւ բնիկ հայկական ոգի: «Հայոց Երգի Ռամկականք»ը ինքնատիպ դրսեւորում է, քանի որ մի կողմից Ալիշանը հաւաքագրել, դասդասել եւ կազմել է այս շարքը, միւս կողմից՝ թարգմանել՝ պահպանելով գաղափարաբանական, գեղագիտական եւ ազգագիտական արժէքները: Հայրենիքին նուիրուած յաջորդ երգը «Սուրբ դասեր մեծի իշխանի» վերնագրով ներկայացնում է հայ կնոջ անձնուէր կերպարը, նրա բարոյահոգեբանական անձի անկումը յանուն ընտանիքի եւ հայրենիքի բարօրութեան: Թեմայի առանցքում հայոց մեծն իշխանի դստեր անխուսափելի ամուսնութիւնն է թափար խանի հետ: Անշուշտ, երգը յագեցած է աղիողորմ լացով եւ ցաւագին ընկճախտով, քանի որ իշխանի դուստրը մահմեղական կրօնը պաշտող ամուսին է ունենալու, բայց հաստուածում դժբախտ բախտի դրամայի թնջուկում ի յայտ է գալիս պառաւ դայեակի բարոյախրատական մէջբերումը՝ հոգեբանական եւ լայնախոն նուրբ դիտարկմամբ, այն իր բովանդակութեամբ ընդգրկում է հետեւեալ գաղափարը. նոյնիսկ օտար եւ այլախոհ աշխարհում հայ կինը պէտք է յիշի, աջակցի եւ գործի ի սպաս հայրենիքի եւ հայ ժողովրդի: Այսպէս.

Ականջըդ բաց լրսէ խրատիս,  
Մըտիդ ձրգես էս պառաւիս.  
Ուր որ գընաս ինչ տեղ ընթիս,  
Հաստատ մընաս լուս հաւատիս:  
Զըմոնանաս Հայոց ազգիս,  
Միշտ հանապազ նըրան օգնիս,  
Ամենայն ժամ՝ միսթըդ ձրգիս  
Հայրենեացըդ պիտոյ ըլնիս:  
Էս, տէր ընդ քեզ, գընաս բարեւ,  
Քրիստոս պահէ քո լոյս արեւ:

Open thy ear, and listen to my counsel,

Remember this old woman:

Wherever thou shalt go and wherever thou shalt be,

Always hold fast thy bright faith.  
 Forget not of Armenian nation;  
 And always assist and protect it.  
 Always keep in thy mind  
 To be useful to thy country.  
 Oh! God be with thee, farewell!  
 May Christ preserve thy bright sun!

*Հասուածում ներկայացւում է ծեր հայ կնոջ իմաստութեամբ եւ կենսափորձով հարուստ խօսքերը՝ ուղղուած իշխանի աղջկան, որոնք անգլերէնով թարգմանուած են բանաստեղծական համաչափ եւ զուսպ երանդներով։ Հարկ է նշել, որ հայերէն տարբերակում տեղ-տեղ նկատում են հրամայական արտայայտութիւններ (ականջըդ բաց լրսէ խրատիս; մըտիդ ձըգես էս պառաւիս; չըմոռանաս Հայոց ազգիս եւ այլն), որոնք հմտօրէն ներմուծուել են անգլերէն թարգմանութեան մէջ՝ շեշտադրելով եւ ամրացնելով ծեր կնոջ ասոյթը (open thy ear, and listen to my counsel; remember this old woman; forget not of Armenian nation, etc):*

*Հետաքրքրական է նաեւ ալիշանեան անգլերէն թարգմանութիւնների լեզուն եւ ոճը, յատկապէս ազգամշակութային բաղադրիչների փոխակերպման հարցում, օրինակ մի շարք ազգային երանդ ունեցող արտայայտութիւններ, ասենք՝ լեզուդ սեւնայ – May thy tongue turn black, ptebaնդ չորնայ – thy mouth become dry!, մենք ամենքըս ցաւըդ տանենք – Let us all bear thy grief together եւ այլն, թարգմանուած են ձեւաբովանդակային ամբողջութեան պահպանութեամբ, մինչդեռ կամ անթարգմանելի կապակցութիւններ, որոնք վերարտագրուել են թիրախ ընթերցողի լեզուամտածողութեանը մօտ կամ համապատասխան, ինչպէս՝ նարըդ կըտրած – a foolish maid (անմիտ աղախին), վայ իմ գըլխիս – Unhappy me! (անբախտ կամ ապերջանիկ եմ) եւ այլն:*

*«Հայոց Երգի Ռամկականք» շարքում երբեմն-երբեմն նկատում են նաեւ գրադարձութեան օրինակներ, որոնք ուղեկցուում են մանրակրկիտ մեկնաբանութիւններով եւ ծանօթագրուում են, ինչպէս ի մօյտան ելել – come into meydan, որը բացատրում է որպէս թուրքական ծագում ունեցող տաղը եւ նշանակում է հրապարակ դուրս գալ կամ ի յայտ գալ կամ լաւաշ կամ լոշ – lavash, losh, որը ներկայացւում է որպէս հայկական բլիթ (pancake): Հետեւելով գիտականութեան ընթացակարգին՝ Ալիշանը մի կողմից ներկայացնում է գեղարուեստական արժէք ունեցող շարք, միւս*

կողմից էլ՝ թիրախ ընթերցողին տալիս է համապարփակ հանրագիտարանային տեղեկութիւն իր ծանօթագրութիւններում, որոնք ընդգրկում են պատմական Հայաստանի տեղանուններն ու դրանց մասին եղած իրական պատմութիւններն ու երբեմն էլ աւանդազրոյցները, ինչպէս օրինակ Խոր Վիրապի, Կիլիկիայի մայրաքաղաք Սիսի, Նոր Ջուղայի, Մասիսի, Էջմիածնի, Գեղարդայ վանքի, Մուղնիի, Շամիամակերտի, Աղթամարի եւ այլ տեղանունների մասին:

Ինչպէս վերը նշեցինք, Ալիշանը ռամկականքի շարքը փորձել է ներկայացնել համակողմանիօրէն՝ անդրադառնալով կեանքի եւ կենցաղի տարբեր խնդիրներին: Այս առումով, հետաքրքրական է կեանքի քաղցրութեան թեմային անդրադառնող երգը, որտեղ եպիսկոպոսը, նոր այգին դեռ չտնկած եւ դրա պտուղը դեռ չհամտեսած, ողբում է իր մահուան մօտալուտ իրողութիւնը: Երգը սկսում է հետեւեալ տողերով.

Յամէն առաւօտ եւ լոյս  
Պլպուլն էր նստեր յայգոյս.  
Քարցրիկ ձայմէր այս վարդոյս.  
Արի եկ ել յայս այգոյս:  
Յամէն առաւօտ եւ լոյս  
Գարրիել ասէր հոգուոյս  
Արի եկ ել յայս յայգոյս  
Այս իմ նորատունկ այգոյս:

Every morning and at dawn  
The nightingale sitting in my vineyard,  
Sing sweetly to this my rose:  
Rise and come from this vineyard.  
Every morning and at dawn  
Gabriel says to soul:  
Rise and come from this vineyard,  
From this newly-built vineyard.

Շօշափելով՝ մարդու՝ կեանքից հեռանալու դժկամութիւնը՝ հատուածում ընդգծուում է չնչաւոր էակների ինքնապաշտպանական բնագդը եւ վախր մահուան նկատմամբ, «չգոյ»ի գաղափարը եւ մօտալուտ ֆիզիկական կենսագործունէութեան դադարը հերոսի դրաման է: Այգին իր տքնաջան աշխատանքի արդիւնքն է, եւ եպիսկոպոսը ներքին պայքարի մէջ է բնութեան օրէնքի հետ, որը յատկապէս ընդգծուում է իր կատարած անխոնջ աշխատան-

քով. չէ որ նա քար է կրել ձորերից, պատ է բոլորել այգու համար, տնկիրներ ցանել, ջրել եւ այլն: Երդը ամբողջութեամբ պատկերաւոր է, առլեցուն բնութեան եւ մարդու փոխտեղակայուող զգացումներով ու կերպաւորումներով, որոնք ստեղծել են ձեւաբովանդակային ամբողջութիւն: Ալիշանի թարգմանութիւնը մի առանձին գրական կոթող է, որտեղ պահպանուած է յանդաւորման եւ ռիթմային կառոյցները, ինչպէս նաեւ իմաստաբովանդակային առանձնայատկութիւնները:

Անշուշտ, դժուար է մէկ ուսումնասիրութեան շրջանակներում բազմակողմանիօրէն ներկայացնել Ղ. Ալիշանի թարգմանական գործունէութիւնը, նրա կիրառած սկզբունքներն ու օրինաչափութիւնները, որոնք մի ուրոյն էջեր են բացում հայ թարգմանական արուեստի համար: Մեր համեստ ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ Ղ. Ալիշանը հայ ընթերցողին է փոխանցել եւ նորովի բացայատել հայ ազգային կոթողները, աւելին, հմուտ ստեղծագործը թարգմանել է դրանք՝ համաձայն համարժէքութեան սկզբունքի, հեղինակի ոգու, լեզուի եւ ոճի: Ալիշանն առանցքային էր համարում թարգմանութեան կատարած գործառոյթների անհրաժեշտութիւնը՝ որպէս ազգային լեզուի եւ գրականութեան զարգացում, ազգամշակութային արժէքների ընկալում, ճանաչում եւ փոխհարստացում: Մխիթարեանների գործչի ստեղծագործական ուղին քննելիս նկատելի է դառնում, որ նա որոշակի նպատակադրմամբ է ընտրել տեքստերն ու հատուածները հանրութեանը լուսաբանելու եւ թարգմանելու ռազմավարութիւնը, որոնք միտուած են եղել զարգացնելու հայ ընթերցողի միտքը եւ ներթափանցելու մտաւոր ունակութեան խորը ծալքերը:

ՀՈՒԽԶԱ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

### **Summary**

## **Fr. GHEVOND ALISHAN AS A TRANSLATOR OF “ARMENIAN POPULAR SONGS”**

LUIZA GASPARYAN

Ghevond Alishan (1820-1901) is one of the brilliant members of the Mkhitarist Congregation, who carried out a giant work in the field of Armenian Studies. Alishan emphasized and reinforced the significance of the cultural, historical treasures of the Armenian nation, as one of the ancient civilization of the world, which afterwards inspired him to assemble, classify and translate into English the cycle of folk and gusan songs entitled as “Armenian Popular Songs”. The comparative analysis of the original folk songs and its English translations has shown that Alishan was a skillful composer, which aimed at transferring the masterpieces of Armenian national culture to English speaking reader by preserving the principles of faithfulness, the spirit, the style and language of popular songs.